

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ԴԵՌԱՀԱՆՆԵՐԻ ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՁԻ ՎՐԱ***

Վիտյա Յարամիշյան, Արայիկ Ֆիրյան

Դեռահասի անձի ծևավորման և զարգացման գործընթացում, օրգանիզմի բուռն վերակարուցմանը գուգընթաց, փոփոխություններ են տեղի ունենում նաև անձի հոգեհոգական դիրտում[1]: Դեռահասի ֆիզիկական և հոգեկան զարգացումը պայմանապարփառ է ինչպես հոգեբանափիզիոգիական, այնպես էլ սոցիալական գործոններով: Վերջին ժամանակներում այդ գործոնների ծևավորման վրա նշանակալի ազդեցություն ունեցող գործունեության բնագավառների շարքին են սկսել դասել նաև ֆիզկուլտուրան և սպորտը: Գոյություն ունի վարկած, որ դեռահասության տարիքում ֆիզիկական վարժությունները և տարբեր սպորտային պարագաները նպաստում են ոչ միայն դեռահասների ֆիզիկական զարգացմանը և ֆիզիկական առողջության ամրապնդմանը, այլ նաև օճանդակում են մտավոր աշխատունակության ակտիվացմանը և հոգեկան կայունությանը՝ նվազագույնին հասցնելով զգացմունքային լարվածությունը և ագրեսիվության աստիճանը: Այս տեսությանը իր հետազոտության շրջանակներում անդրադարձել է Գ.Ե.Ստուպինան, ով, ուսումնասիրելով ֆիզիկապես պատրաստված և անբավարար պատրաստականություն ունեցող դեռահասների ագրեսիվության աստիճանը, եկել է այն եգրակացության, որ ֆիզիկական վարժությունների միջոցով շարժողական զննունակությունների կատարելագործումը նպաստում է տվյալ խմբում ագրեսիվության աստիճանի հջեցմանը[2]: Միաժամանակ, մի շարք գիտնականների աշխատանքների արդյունքները ստիպում են հակառակվելու այս տեսությանը և հակվել այն տեսակետին, որ որոշ մարզաձևեր ագրեսիա են առաջ բերում: Արդի պայմաններում դեռահասների շրջանում ագրեսիվության դրսնորման աճը հասարակության սոցիալական սուր արորեններից մեկն է, որը և դարձել է մեր ուսումնասիրության առարկան: Որպես կանոն՝ ագրեսիվ գործողությունները գերիշխում են դեռահասության շրջանում: Դեռահասության տարիքը միաժամանակ համարվում է անցումային: Այս տարիքում տեղի են ունենում շատ փոփոխություններ՝ փոխվում են դեռահասի կյանքի և գործունեության պայմանները, կողեւություն նորա կարգավիճակը, դեռահասի մոտ ի հայտ է զալիս ինքնածանաշման պահանջմունքը: Դեռահասության տարիքում անձնավորությանը բնորոշ է եսակենտրոնությունը, որը նպաստում է միջանձնային հարաբերություններում գժուայնության մակարդակի բարձրացմանը: Ինքնահաստատման խնդիր ունեցող դեռահասը իր յուրատիպությունն ապացուցելու համար հաճախ ժխտողականություն է ցուցաբերում, ցուցադրաբար հակառակվում մեծերի պահանջին[3]: Նրանք առավել զգայուն են տարբեր բնական և սոցիալական գործոնների ազդեցության նկատմամբ: Դեռահասի հոգենոր կյանքի վրա առանձնապես ազդում է այնպիսի բնախսական գործընթաց, ինչպիսին սեռական բուռն հասունացումն է: Հսկայական է այդ գործընթացի ազդեցությունը մտածողության, հույզերի, մեծերի և հասակակիցների հետ՝ նրա փոխհարաբերությունների վրա[4]: Այս տարիքում տղաների խմբում ծայրահեղո-

** Հոդվածն ընդունվել է 23.12.2014:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Դեն խրախուսվում են առնական արժեքները՝ ուժը, համարձակությունը, ագրեսիվությունը: Երբեմն տղամարդ երևալու բուռն զգությունը հասցնում է դեմքանու վարքի (շեղում. սոցիալական նորմերին հակասող) [5]:

Ի.Կոնք նշում է, որ ագրեսիվությունը միշտ էլ եղել է դեռահասների խմբային վարքի բնորոշ գիծը: Ագրեսիա ասելով՝ հասկանում ենք ուրիշին գիտակցարար վնաս հասցնելը կամ այդպիսի մուադրությունը: Ըստ արտահայտման ձևի տարբերում են՝ ուղղակի ագրեսիա, բանավոր (վերբալ) ագրեսիա, մեղքի զգացում, մերժողականություն, նյարդայնություն, թշնամություն, ինքնաբերական (սպոնտան) ագրեսիա, գործնական ագրեսիա, համընդիմանուր մերժողականություն, ֆրուստրացիա:

Ըստ Յ.Խ.Վկանովայի, ով ուսումնասիրել և համեմատել է ինչպես մարզիկների, այնպես էլ սպորտային պարապմունքների չհաճախող դեռահասների անձնային հոգեբանական առանձնահատկությունները, մարզիկ դեռահասներին բնորոշ են նշանակալի նվազումների ծեռքբերման բարձր շարժադրավորումը (նոտիվացիան), հոգական կայունությունը, վստահությունը, հաստատակամությունը և ագրեսիան: Ֆիզկուլտուրայով գրաղվողների հոգական վիճակի հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ ուրախության, կրծքության և բավարարվածության զգացմունքները առաջանում են նարզական խաղերի և շարժախաղերի ընթացքում, իսկ մարտարվեստի մի շարք ծևերում բացակայում է կատարվող շարժումների հոգենոր կողմից ընկալումը և որն իր հերթին խթանում է մարզվողների մոտ զայրույթի, դաժանության, մեծամութության և ագրեսիվության առաջացումը[2]:

Մինչև վերջին ժամանակները հասարակության կրողմից անհերքելի էր թվում ծևավորված այն նույայնությունը, որ սպորտային պարապմունքները նվազագույնին են հասցնում դեռահասների շարքերում ագրեսիվության աստիճանը: Մի շարք մասնագետներ նշել են, որ ագրեսիվության արտահայտված ցուցադրումը բացակայում է ժամանակակից սպորտի այն մարզաձևերում, որոնցում գործում են խաղի խիստ կանոններ, քանի որ դեռահասը մրցումներից հեռացված լինելու սպառնալիքով չի համարձակվում խախտել դրանք: Նրանցից շատերը այդ ագրեսիվությունը ցուցադրում են սպորտից դուրս՝ փորձելով օգտագործել մարզման ժամանակ ստացած ուժային կարողությունները:

Ըստ Վ.Ի.Սիվակովի՝ ճարապկության և դիմացկունության հետ կապված վարժությունները նպաստում են դեռահասների մոտ ագրեսիվության իջեցմանը: Սրանից հետևում է, որ ագրեսիվության աստիճանը կախված է ոչ միայն դեռահասների հոգեբանական առանձնահատկություններից, այլև ընտրած մարզաձևից[6]:

Այս տեսակետին է հակված նաև Ն.Յ.Շումակովան, ով իր հետազոտություններում ցույց է տվել, որ դեռահասների մոտ ուրախության և բավարարվածության վար զգացմունքներ են արտահայտվում մարզական խաղերի ժամանակ, մինչդեռ մարտարվեստով (ըմբշամարտ, բռնցքամարտ, թեքվանող) գրաղվողների մոտ այդ զգացմունքները արտահայտվում են հետևյալ հարաբերակցությամբ՝ ագրեսիվություն-20%, ուրախություն-9,2%, զայրույթ-8,2%, դաժանություն-15,3%[7]: Այդ մասին է վկայում նաև մեր կողմից Ստեփանակերտու քաղաքի թիվ 1 դպրոցի մարտարվեստի տարրեր ծևերի խմբերում ընդգրկված թվով 26 աշակերտուների հարցման արդյունքները: Հարցվողների 84%-ը նշել են, որ մինչև մարտարվեստով գրաղվելը իրենք եղել են ավելի հանգիստ և խաղաղ:

Ըստ Ե.Վ.Մյասնիկովայի՝ այն դեռահասների մոտ, ովքեր ընդգրկված են ըմբշամարտի խմբակներում, նկատվել է ֆիզիկական ագրեսիվության ամենաբարձր աստիճանը (85%), մինչդեռ լողորդների մոտ այդ ցուցանիշը (51%) է: Այն երեխաները, որոնց

ՄԵՍՐՈՊ ՄԱՀԾՏՎԵ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

մոտ մարզման շրջանը բավական երկար է (լողորդմեր), ֆիզիկական ագրեսիվության աստիճանը անհամեմատ ցածր է, քան այն դեռահասների մոտ, ովքեր նոր են ներգրավվել սպորտային մարզումների (Ըմբշամարտիկներ) [8]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Кабачков В.А. Влияние занятий различными видами спорта на психическую устойчивость и физическую подготовленность подростков с асоциальным поведением. Теория и практика физической культуры 2003, N 10, стр. 60-63
2. Вылканова Я.Х. Влияние занятий спортом на развитие личностных предпосылок устойчивости к стрессу в подростковом возрасте. Дис... канд. психол. Наук Я.Х. Вылканова, М., 2006
3. Յարամիշյան Վ.Բ. ()N 3-4 2013թ. էջ 110-117:
4. Կարապետյան Ս.Կ. Երեխանների և դեռահասների աճի ու զարգացման օրինաչափությունները և նրանց գործունեության հիմունքները, Եր., 1980
5. www.Armsoul.com
6. Сиваков В.И.Методика физического воспитания младших подростков, имеющих повышенный уровень тревожности, агрессивности. Дис. Канд. пед. наук-М.,1993, стр.184
7. Шумакова Н.Ю. Взаимосвязь физических упражнений с агрессивным поведением подростков. Теория и практика физической культуры 2002 N 9,стр. 53-56
8. <http://festival.1september.ru/articles/505444/>.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Ֆիզիկական Վարժությունների և սպորտի ազդեցությունը դեռահասների ագրեսիվ Վարքի վրա
Վիտյա Յարամիշյան, Արայիկ Ֆիրյան**

Սպորտի ազդեցությունը դեռահասների ագրեսիվության աստիճանի բարձրացման վրա միանշանակ համարել չի կարելի: Այն պայմանավորված է մարզաձևի առանձնահատկությամբ: Այն մարզաձևներում, որոնցում առկա է նրգակցի հետ անմիջական ֆիզիկական շփում, ֆիզիկական ագրեսիվությունը ուղղակի անհրաժեշտություն է, որը երբեմն արտահայտվում է սպորտից դրույ՝ թափանցելով սոցիալական միջավայր: Մարտարվեստի մի շարք ձևեր, դեռահասների մոտ մշակելով ուժային հմտություններ, նրանց մեջ չեն դաստիարակում բռնության դեմ հոգեբանական կայունություն:

Բանալի բառեր՝ սպորտ, ագրեսիվություն, դեռահասներ, մարզիկներ, սպորտ խաղեր, մարտարվեստ:

РЕЗЮМЕ

Влияние физических упражнений и спорта на агрессивное поведение подростков
Витя Ярамишян, Араик Фирян

Влияние спорта и физических упражнений на уровень агрессивности у подростков однозначным считать нельзя, так как зависит от специфических особенностей данного вида спорта. В тех видах спорта, где подразумевается физический контакт с соперником, физическая агрессия необходима. Формирующаяся агрессивность иногда проявляется и вне спорта, проникая в социальную среду.

Многие виды единоборств, развивая у подростков силовые навыки, не воспитывают в них психологического противоядия от насилия.

Ключевые слова: спорт, агрессивность, подростки, спортивные игры, боевые искусства.

SUMMARY

The Impact of Physical Exercises and Sports on Adolescent Aggressive Behavior
Vitya Yaramishyan, Arayik Firyan

The impact of sports on the rise in the level of aggressiveness in adolescents can not be one-sided. It is conditioned by the peculiarities of sport. In some sports where there is a direct physical contact with an opponent, physical aggressiveness is just necessary, which sometimes manifests itself out of the limits of the sport, entering social environment. While in other ones developing military skills among teenagers do not bring up violence against psychological stability.

Keywords: sports, aggression, teenagers, sport games, martial arts